

ԵԶՆԻԿԻ ԵՐԿԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոֆ. Ա. Ա. ԱՐԲԱՆԱՄՅԱՆ

Հինգերորդ դարի մեծ մտածող-փիլիսոփա, հասարակական-մշակութային նշանավոր գործիչ Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկը հայ հին մատենագրության ղեղեցիկ նմուշներից մեկն է, որը արժանացել է հայագիտության ուշադրությանը: Նրա նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունը ավելի ընդգծվածությամբ է արտահայտվել հատկապես վերջին երկու դարերի ընթացքում՝ մի կողմից բնագրի հրատարակման (ինչպես և թարգմանության), մյուս կողմից՝ ուսումնասիրման ձևով: Նրա մասին գրվել են գրական-բանասիրական ընդհանուր բնութագրականներ, տարբեր կողմերից նրա էությունը վեր հանող և հեղինակի աշխարհայացքը բնորոշող գիտական վերլուծություններ ու հետադոտություններ և այլն: Ստեղծվել է հարուստ գրականություն, որի թեկուղ և համառոտ բնութագրումն այս հոդվածի սահմաններից դուրս է¹: Այստեղ մեր նպատակը չէ նաև տալ այդ մեծարժեք ու հետաքրքրական երկի ընդհանուր կամ թեմատիկ վերլուծությունը: Տվյալ դեպքում մեզ ղբաղեցնելու են բնագրային որոշ իրողություններ, որոնց վերաբերյալ ունեցած մեր պատկերացումներն ու մտորումները հարկ ենք համարում ներկայացնել այդ երկով հետաքրքրվողներին:

«Եղծ աղանդոցը» պատկանում է այն երկերի թվին (ինքնուրույն և թարգմանական), որոնց լեզուն մեսրոպյան կամ դասական հայերենն է: Մեր հին գրավոր լեզվի այդ շրջանը ներկայացնող չորս տասնյակից մի քիչ ավելի գործերը, ինչպես հայտնի է, լեզվա-ոճական առանձնահատկությունների հիման վրա բաժանվում են չորս դասի, որոնցից առաջինը հենց Եղնիկի անունով կոչվում է Եղնիկյան դաս: Եղնիկի աշխատությունը այդ դասի մեջ մտնող միակ

¹ Հիշենք մի քանի կարևորները՝ Հ. Թորոսյան, Եղնիկ և յուր երկասիրությունն, «Բազմավեպ», 1889: Հ. Տաշյան, Խոսրովիկ և Գիրք Հերձվածոց, «Հանդես ամսօրյա», 1892: Վ. Սոմունճյան, Կենսագիր և նկարագիր Եղնիկ վարդապետի Կողբացվո, «Բազմավեպ», 1893: Գ. Գալեմբյարյան, Նորագույն աղբերք Եղնիկ Կողբացվո, «Հանդես ամսօրյա», 1893, 1894, 1896 (առանձին գրքով՝ 1919 թ.): Ս. Վեբեր, Եղնիկ «Եղծ ընդդեմ աղանդոց» գործուն հորինման ժամանակն ու վավերականությունը, «Հանդես ամսօրյա», 1898 (այլև՝ «Բազմավեպ», 1898): Հ. Մ. Շմիդի թարգմանության՝ Des Wardapet Eznik von Kolb *Wider die Sekten*՝ ներածությունը (Վիեննա, 1900): L. Maries, Le De Deo d'Eznik de Kolb..., Paris, 1924: Նույնի Étude sur quelques noms et verbes d'existence chez Eznik..., Paris, 1928: Ն. Ադոնց, Քրիստոսի նշմարներ Եղնիկի մասին, «Բազմավեպ», 1925, 1926: Մ. Արեգյան, Հայոց հին դրականության պատմություն, գիրք 1-ին, Երևան, 1944, էջ 126—149: В. К. Чалоян, К вопросу об учении Езника Кохпечи, армянского философа V века, Ереван, 1940: Նույնի՝ История армянской философии, Ереван, 1959, էջ 63—83: Այլև՝ Եղնիկի երկի ուս. թարգմանության առաջաբանը (Երևան, 1968): Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 1, Երևան, 1956, էջ 126—20: և այլն:

ինքնուրույն գործն է (մյուսները թարգմանական են): Եղնիկյան դասի լեզվի համար նշվող բնորոշ հատկանիշների մեջ որպես առավել էական հատկանիշներ ընդգծվում են հստակությամբ ու կանոնավորությամբ (կան և ուրիշները), որոնք մասնավորապես վերաբերում են և «Եղծ աղանդոցին»: Իհարկե, այդ գրավոր հուշարձանի լեզուն ընդհանուր առմամբ այդպիսին է, և այդ է պատճառը, որ մեր հին լեզուն սովորելու համար դա միշտ ընտրվում է որպես օրինակելի նմուշ: Սակայն կա նաև այն կարծիքը, թե հիշյալ գործի լեզուն դժվարամատչելի է: Այդ տպավորությունն իրականում առավել չափով նրա բովանդակության յուրացման հետ է կապվում: Բայց միաժամանակ չի կարելի չընդունել, որ այնտեղ կան տարակարծություններ հարուցող, դժվար մեկնաբանվող կամ բացահայտորեն աղավաղված և ուղղման ենթակա ձևակերպումներ, արտահայտություններ, բառեր: Պետք է ենթադրել, որ դրանց մի մասը գալիս է հեղինակային բնագրից, իսկ մի մասն էլ հետագա գրչադրական ընդօրինակումների հետևանք է: Հատկապես վերջին կարգի տարակուսելի իրողությունների հաղթահարումը մեծ մասամբ դժվարանում է նրանով, որ մեզ է հասել միայն մեկ ձեռագիր (ԶԻԹ=1280 թվակիր), այն էլ տպագրման արժանանալուց հետո երկար ժամանակ կորած է համարվել և վերագտնվել է 1902 թ.: Ինչ խոսք, շատ ձեռագրերի առկայության դեպքում համեմատական քննությամբ հնարավոր կլիներ այդ կարգի շատ երևույթներ հիմնավոր ձևով բացատրել, ճշտումներ կատարել և այլն: Իսկ ստեղծված դրությամբ առաջ են քաշվում այլ և այլ միջոցներ:

«Եղծ աղանդոցի» բնագրային հիշյալ բնույթի իրողություններին անդրադարձել են շատ բանասերներ, որոնք առաջարկել են դանազան սրբագրումներ («ուղղագրություններ»), տվել մեկնաբանություններ և այլն: Դրանց թվում են՝ Ն. Բյուզանդացին², Թ. Թոռնյանը³, Հ. Աճառյանը⁴, Գ. Նահապետյանը⁵, Բ. Կյուլեսերյանը⁶, Լ. Մարիեսը⁷, Ն. Ադոնցը⁸, Ե. Փեչիկյանը⁹, Ե. Դուրյանը¹⁰, Վ. Առաքելյանը¹¹ և ուրիշներ: Նրանց աշխատանքը առաջին հերթին ուղղված է եղել բնագիրը ճիշտ հասկանալու նպատակին: Եվ պետք է ասել, որ այդ կարգի դիտողությունների, առաջարկների ու բացատրությունների մեջ քիչ չեն արժեքավորներն ու ընդունելիները, որոնք նպաստում են երկի էության պատշաճ բացահայտմանը: Սակայն այդպիսով խնդիրը սպառված չի կարելի համարել, քանի որ դեռ կան սլարղաբանման ենթակա տեղեր, ինչպես նաև

² «Հայկական բառաքնություն», Կոստանդնուպոլիս, 1880: «Քննասեր», Ա, Ստոկհոլմ, 1887: «Նախնիք» (անտիպ):

³ «Հատընտիր ընթերցուածքի մատենագրութեանց նախնեաց», Վիեննա, 1891 (առաջին հրատ. 1866):

⁴ «Քննութիւն և համեմատութիւն Եղնիկայ նորագիտ ձեռագրին», Վիեննա, 1904:

⁵ «Ուղղագրութիւնը աղգային մատենագրաց», Վենետիկ, 1907:

⁶ Տե՛ս «Հանգես ամսօրյա», 1907, էջ 310—316:

⁷ Տե՛ս նրա վերը նշված աշխատությունները, այլև Եղնիկի երկի բնագրի փարիզյան վերջին հրատարակությունն ու ֆրանսերեն վերջին թարգմանության ծանոթագրությունները («Ezrak de Kolb. De Deo», Paris, 1959):

⁸ «Քննական նշմարներ Եղնիկի մասին»:

⁹ «Եղնիկի Եղծ աղանդոցի բնագրի և տպագրությանց համեմատություն և քննություն», «Բաղմավես», 1928, 1929:

¹⁰ «Եղնիկի մասին սրբագրություններ և դիտողություններ»: «Ամբողջ երկեր», 2, Խրուսաղմ, 1935:

¹¹ «Գրաբարի հատընտիր», Երևան, 1946:

և զած բանասիրական որոշ առաջարկներ ու մեկնաբանություններ վերանայման կարիք ունեն։ Հետևաբար այդ լավ գործը պետք է շարունակել։

Այժմ անցնենք մեր մեկնաբանական դիտողություններին։

1. Աղավաղում կա բնագրի հետևյալ հատվածում, որը ձեռագրում ու յուրացրելով այսպիսի տեսք ունի. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ ի բնութենէ արարածոյ և յաստուածեղէն զրոց նմա վարդապետութիւն ընծայանայր»¹²։ Սա հասկանալի չէ և տրամաբանորեն չի կապվում շարունակության հետ։ Իսկ շարունակությունն այս է. «Որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն, եթէ ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են. դի ցուցցէ թէ որ միտին՝ կամօք միտի, և ոչ ուրուք բռնութեամբ»։ Սա կանոնավոր է ու հասկանալի. իհարկե, առանձին վերցված։ Սակայն առաջին մասի պատճառով անկապ ու անտրամաբանական է դառնում ամբողջ հատվածը։ Ուրեմն հասկանալի դարձնելու համար պետք էր վերակազմու-

թ. Գալեմբյարյանը, հենվելով Մեթոդիոսի աշխատության վրա, առաջարկել է այսպիսի վերակազմություն. «Եթէ այնպիսի ինչ բնութեամբ մարդոյն առեալ էր, ապա ոչ յուրով վարդապետութենէ նմա դիպէր անաստուտութիւնն, այլ ի բնութենէ արարածոյ։ Եւ յաստուածեղէն զրոց նմա վարդապետութիւն ընծայանայր»¹³։ Ընդգծված մասի վերականգնումը զգալի չափով նպաստում է հատվածի առաջին մասի բովանդակությունը հասկանալուն, սակայն այդպիսով հակասական է դառնում «եւ յաստուածեղէն զրոց նմա վարդապետութիւն ընծայանայր» միտքը։ Նշենք նաև, որ «բնութիւն» բառն էլ իզուր է փոխված գործիականով։ Պարզ է, որ այդ դրույթամբ ցանկալի արդյունքը դեռ չի ստացվում։ Ուրեմն դարձյալ անհրաժեշտ է միջամտել։

Մեր կարծիքով՝ «Եւ յաստուածեղէն զրոց նմա վարդապետութիւն ընծայանայր» նախադասությունը ճիշտ չի անկախացված վերջակետով, և, բացի դրանից, «ընծայանայր» բայ-ստորոգյալն էլ ժխտական ձևով պետք է լինի՝ «ոչ ընծայանայր»։ Ըստ երևույթին, վերը և զած «ոչ» ժխտական մասնիկը վերաբերել է նաև «ընծայանայր» բային, երբ հիշյալ նախադասությունը դեռ բնագրի աղավաղումով առանձնացված չի եղել։ Այսպիսով՝ պետք է վերականգնել նախադասության ամբողջությունը՝ վերջակետը փոխարինելով ստորակետով, ինչպես նաև «ոչ»-ը «ընծայանայր»-ի վրա տարածելով։ Այդպիսի փոփոխություններով ամբողջ հատվածը կստանա այս տեսքը. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ յուրուք վարդապետութենէ նմա դիպէր անաստուտութիւնն, այլ ի բնութենէ արարածոյ, և յաստուածեղէն զրոց նմա վարդապետութիւն ոչ ընծայանայր. որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն, եթէ ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են. զի ցուցցէ, թէ որ միտին՝ կամաւք միտի, և ոչ ուրուք բռնութեամբ»։

Պետք է նկատի ունենալ նաև, որ մեր հին լեզվի «վարդապետութիւն» բառը, բաղմիմաստ լինելով, այստեղ դործածված է երկու տարբեր իմաստներով, նախ՝ «հրահրում, դրդում, սաղորանք», ապա՝ «ձևակերպում, բնութա-գրություն, բացատրություն»։

¹² «Եղեկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, էջ 44։ Բնագրային մեջբերումների համար այսուհետև փակագծում նշելու ենք այս հրատարակության էջերը։

¹³ Գ. Գալեմբյարյան, նշվ. աշխ., Վիեննա, 1919, էջ 64։

Այսքանից հետո հիշյալ հատվածը, աշխարհաբարի վերածվելով, կհասկացվի այսպես. «Եթե մարդն այդպիսի շար էություն ստացած լիներ (այսինքն՝ ի բնե շար էությամբ ստեղծված լիներ), ապա անհնազանդությունը նրա մեջ երևան կգար (բառացի՝ նրան կհանդիպեր) ոչ թե մեկի հրահրումից, այլ (իր իսկ) արարածային էությունից, և Աստվածաշունչ դրքում էլ դրա վերաբերյալ (այնպիսի) ձևակերպում չէր տրվի, ինչպես որ մի տեղ աստվածային խոսքով ասվում է՝ «Մարդիկ մանկությունից հակված են դեպի շարիքը», որպեսզի ցույց տրվի, թե ով հակվում է, կամովին է հակվում և ոչ թե ուրիշի բռնությամբ»:

Այսպիսի վերակազմությունն ու մեկնաբանությունը ոչ թե հակասում, այլ, ընդհակառակն, համընկնում են Եզնիկի որդեգրած ու դավանած գաղափարներին: Եզնիկն ընդունում է, որ մարդն էությամբ շար չէ, սակայն ունի կամքի ազատություն, որով կարող է նաև շարություն դործել, անհնազանդություն անել և այդպիսով շար դառնալ: Իսկ անհնազանդությունը, ինչպես հաղորդում է կրոնական առասպելը, կարող էր հրահրվել մեկ ուրիշի (տվյալ դեպքում՝ սատանայի) դրդումով, բայց ոչ թե բռնությամբ: Եվ եթե մարդը էությամբ շար ստեղծված լիներ, ապա անհնազանդությունը կբխեր հենց իր էությունից, ու ինքն ազատակամության հիման վրա ուրիշից դրդում չէր ստանա, և Աստվածաշունչում էլ այնպես չէր բնութագրվի, թե մարդը մանկությունից իր կամքով է հակված դեպի շարը (ուրիշի սադրանքով, բայց ոչ հարկադրանքով):

Ցույց տրված մասում «ի մանկութենէ մարդիկ ի խնամս շարի միտեալ են» մեջբերումը կատարված է Աստվածաշունչի «Իիրք ծննդոցի» 8-րդ գլխի 21-րդ հատվածից: Իսկ այնտեղ դա հետևյալ ձևով է. «Միտք մարդկան հաստատեալ են ի խնամս շարի ի մանկութենէ իւրմէ», այլ տարբերակներում. «Միտք մարդոյ հաստատեալ են...»¹⁴:

Հիշենք, որ Եզնիկի երկի համապատասխան հատվածին անդրադարձել է նաև Ն. Ադոնցը: Նա այն միտքն է հայտնել, թե այդտեղ թյուրիմացություն կա. Եզնիկը սկզբնաղբյուրի (Մեթոդիոսի աշխատության) οὐδ'αὐτὸς ἀλλ' ἄλλος «վարդապետություն» բառը «սատանայի վարդապետություն» հասկանալու փոխարեն հասկացել է «Ս. գրքի վարդապետություն»¹⁵: Եվ, բացի դրանից, մեջբերումն էլ շփոթմունքով է հարմարեցված, հունական աղբյուրը ակնարկում է Երեմիայի Մարգարեությունը¹⁶:

Սակայն վերը բերված վերակազմությամբ «վարդապետություն» բառը մի դեպքում ընկալվում է որպես «սատանայի վարդապետություն», այսինքն՝ դրդում, սադրանք, մյուս դեպքում՝ «Ս. գրքի վարդապետություն» (տվյալ դեպքում՝ բնութագրություն, ձևակերպում), և մեջբերումն էլ համապատասխանում է արտահայտված մտքերին: Եզնիկը հիշյալ մտքերի համար անկախորեն ընտրել է պատշաճ մեջբերում:

2. Առաջին գրքի ԺԴ գլխի նախավերջին պարբերության մեջ ասված է. «...Իսկ եթե ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրանսն համարիցի, յորժամ մրցել ընդ բանսարկուին մարտնչիցի՝ վաղվաղակի կործանի...» (էջ 58): Տարբեր

¹⁴ Տե՛ս Վենետիկի 1805 թ. հրատարակությունը, էջ 7:

¹⁵ Տե՛ս «Բազմավեպ», 1926, էջ 111:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

պերպ է հասկացվել և վեճի առարկա է դարձել «մրցել... մարտնչիցի» արտահայտությունը: Ձեռագրում «մարտնչիցի» ձևի տեղում գրված է «մարտչիցի»: Բառը կիսված է, և ն տառի տեղը երևում է: Հրատարակիչները դարձրել են «մարտնչիցի»:

2. Ահառյանն այն կարծիքն է հայտնել, թե «մրցել... մարտչիցի» ձևերում երկու ուղղում պետք է կատարել՝ առաջինը դարձնել անցյալ դերբայ («մրցեալ»), իսկ երկրորդը պետք է միացնել՝ ն-ի վերականգնումով՝ «մարտնչիցի», այսինքն՝ ընդունելով «մարտնչիցի» ուղղումը՝ պետք է սրբագրել նաև «մրցել»-ը: Ապա նա ավելացնում է, որ միաժամանակ երկու ուղղումը հավանական չի լինի, ուստի ավելի լավ է առաջին բառը թողնել նույնությամբ («մրցել»), իսկ մյուսն ուղղել «մատչիցի» ձևով (ուրեմն՝ «մրցել... մատչիցի»)¹⁷:

Ե. Դուրյանը, անդրադառնալով բնագրի այդ ձևակերպմանը, խստությամբ է արտահայտվել գրելով. «մրցել... մարտնչիցի! հայերեն չէ: Պետք է կարդալ մատչիցի»¹⁸:

«Մարտնչիցի»—«մատչիցի» փոփոխությունն ընդունել է Գ. Խաչատրյանը (Տրապիզոնին) և արտացոլել բնագրի մեջ՝ տողատակում նշելով տպագիր «մարտնչիցի» ձևը՝ որպես սխալ¹⁹:

«Մրցել... մատչիցի», այդպիսով, հասկացվել է «մոտենա կովելու»:

Նշենք նաև, որ Լ. Մարիեսը քննարկվող արտահայտությունը ներկայացրել է ոչ այդպիսի փոփոխությամբ, այլ՝ տպագրված ձևով²⁰:

Մեզ թվում է, որ ճիշտը տպագրվածն է՝ «մրցել... մարտնչիցի»: Ե. Դուրյանը սխալվել է այդ ոճը հայերեն չհամարելով: Բանն այն է, որ դասական հայերենի համար ոչ միայն խորթ չէ, այլև սիրված և ընդունված է բայի դիմավոր ձևի վրա նույն կամ հոմանիշ բայի անորոշ դերբայը դնել որպես ավելադրություն: Իբրև ապացույց հիշենք մի քանի օրինակ. «Շինել շինէին ի պաշտօն դիւաց...» (Ագաթ., էջ 293), «Այն ամենայն ի ձեռն այլոց՝ գրել գրեցաւ» (Բուդ., 3-րդ, Ա), «Անել բազմացաւ» (Բուդ., 3-րդ, Գ) և այլն: Վերոհիշյալ արտահայտությունը այսպիսի գործածություններից մեկն է: «Մրցել» և «մարտնչել» հոմանիշ բայեր են, «մրցել»-ը անորոշ դերբայի ձևով դրված է «մարտնչիցի» դիմավոր ձևի վրա, «կովել» նշանակությամբ՝ որպես ավելադրություն: Այսպիսով տեսնում ենք, որ բնագիրը միանգամայն կանոնավոր է, և միտքն էլ հստակ է: Բերված մասը հասկացվում է այսպես. «Բայց եթե մեկը աստծու պատվիրանները բանի տեղ չդնի (բառացի՝ ոչինչ համարի), բանսարկուի հետ կովելիս անմիջապես կկործանվի»: «Բանսարկու» ասելով հեղինակը նկատի է ունեցել սատանային:

3. Բնագրի «Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի» (էջ 86) նախադասության «արժանիցն» բառաձևը մեր բանասիրության մեջ տարբեր կերպ է հասկացվել ու մեկնաբանվել, ուստի այդ պատճառով էլ տարբեր ձևով է ըմբռնվել ամբողջ նախադասությունը:

17 Տե՛ս «Քննութիւն և համեմատութիւն Եզնկայ նորագիտ ձեռագրին», էջ 86—87:

18 Տե՛ս «Ամբողջ երկեր», 2, էջ 409:

19 Տե՛ս «Եղծ աղանդոցի» դրարար և արևմտահայերեն զուգադիր հրատարակությունը. Թուենոս-Այրես, 1951, էջ 28:

20 Տե՛ս փարիզյան վերջին հրատարակությունը, էջ 30:

Նախ հիշեցնենք, որ առաջին (Զմյուռնիայի, 1762 թ.) տպագրության մեջ դա ներկայացված է «արժանեացն» ձևով («յԱստուծոյ արժանեացն»)։ Ե. Դուրյանը, բերված նախադասությանը հետևող մասը համարելով բացատրության դրա համար, առաջարկել է «արժանիցն» բառաձևը կարդալ «անարժանիցն» («Եւ այն յԱստուծոյ՝ անարժանիցն յիրաւի լինի»)²¹։ Այդ առաջարկի հիման վրա Գ. Խաչատրյանը նախադասությունը թարգմանել է այսպես. «Եւ ասիկա կպատահի անոնց՝ որոնք անարժան նկատուած են Աստուծոյ կողմէ»։ և ապա դրան հաջորդող նախադասության՝ եզակի թվով արտահայտված ենթական ու ստորոգյալը թարգմանել է հոգնակի և հարմարեցրել այդ նախադասությանը (այսպես՝ «վասնզի անոնք կթողուն ղԱստուած...»)²²։ Այդպիսով բնագրի տվյալ մասը ճիշտ չի մեկնաբանվել։

Այստեղ իրականում գործ ունենք «արժան» բառի հետ, որի բնագրային «արժանիցն» ձևը փոփոխության կարիք չի զգում, և նրան չպետք է ձեռք տալ։ Սակայն այն պետք է ընկալել մի յուրահատուկ իմաստով ու վերջինիս հիման վրա էլ մեկնաբանել նախադասությունը։ Իհարկե, «արժան» բառի այդ իմաստը չի անտեսված տեղեկատու գրականության մեջ։ Դա հենց Եզնիկի նույն նախադասության վկայակոչումով նշված է «Նոր հայկազյան բառարանում»-³ «Իրաւունք, օրէնք, արդարութիւն»։ Դրա վրա էլ պետք է կանգ առնել առաջադիր նախադասությունը բացատրելիս։

Հստ այդմ՝ նախդիրը վերաբերում է ոչ թե «Աստուծոյ», այլ «արժանիցն» բառաձևին։ «Աստուած» բառը դրված է ոչ թե բացառականով, ինչպես հասկացել են բանասերները, այլ՝ սեռականով, հատկացուցիչ է «արժան» բառի համար, որը հոգնակի բացառականով է արտահայտված՝ «յ...արժանիցն»։ Բայց միաժամանակ պետք է հաշվի առնել, որ բացառականն այստեղ գործիականի նշանակությամբ է, որպիսի կիրառությունը բացառված չէ թե՛ առհասարակ գրաբարում և թե՛ մասնավորապես Եզնիկի երկում։ Ուրեմն՝ «յարժանիցն» = «օրենքներից՝ օրենքներով»։ Ահա այսպիսի մոտեցմամբ նախադասությունը կարելի է հասկանալ այսպես. «Այն, իսկապես, աստծու օրենքներով է լինում»։

4. Առաջին գրքի ԻԳ գլխում գրված է. «Եւ որ ինչ անմարմին է՝ նա պարզ բնութիւն է, որպէս հրեշտակաց և դիւաց և ոգւոց մարդկան» (էջ 91)։

Բնագրի համար տվյալ շարադրանքի մեջ ավելի ճիշտ կլիներ «նա» դերանունն արտահայտել սեռական հոլովով՝ «նորա»։ «Նորա պարզ բնութիւն է» նշանակում է «նա պարզ էություն ունի»։ Դրեթե նույնն է նշանակում և «նա պարզ բնութիւն է» արտահայտությունը։ Բայց հարցն այն է, որ եղած ձևով անկանոնություն է ստեղծվում հատվածի ամբողջության մեջ, քանի որ «պարզ բնութիւն է» հասկացությունը վերաբերում է նաև շարունակության մեջ նշվող հրեշտակներին, դևերին և մարդկանց հոգիներին, որոնց անունները սեռականով են ներկայացված՝ ճիշտ կերպով։ Դասական հայերենում և, իհարկե, նաև Եզնիկի երկում, շատ սիրված է առարկային հատկանիշի վերագրումը նրա անվան սեռական հոլովաձևի մոտ արտահայտելը։ Մենք չենք անտեսում նաև ուղղականով արտահայտելը, որը շատ ավելի է տարածված։ Այստեղ մեր-

21 Տե՛ս «Ամբողջ երկեր», 2, էջ 409—410։

22 Բունոս-Այրեսի հրատ., էջ 42։

23 Տե՛ս հատ. I, էջ 354։

իսոսքը վերաբերում է ոճական այն անհարթությունը, որ մտքի արտահայտման համար նույնպիսի դեր ունեցող «նա», «հրեշտակ», «դև», «ոգի» բառերից առաջինը պետք է ուղղականով, իսկ մյուսները՝ սեռականով: Եվ, բացի դրանից, այդպիսով «պարզ բնութիւն է» արտահայտությունը հեռավոր ձևով է կապվում շարունակության հետ և կարող է շփոթությունների տեղիք տալ: Առաջարկված փոփոխությամբ վերջինս անմիջականորեն կտարածվի նաև «հրեշտակաց և դիւաց և ոգւոց մարդկան» մասի վրա, ու վարանման տեղիք չի տրվի: Այսպես. «Եւ որ ինչ անմարմին է՝ նո՛ւա պարզ բնութիւն է, որպէս հրեշտակաց և դիւաց և ոգւոց մարդկան», այսինքն՝ «Իսկ ինչ որ անմարմին է, նա պարզ էություն ունի, ինչպես հրեշտակները, դևերը և մարդկանց հոգիները» (որոնք պարզ էություն ունեն):

Իսկ եթե «նա» բառն ընդունենք որպես շաղկապ՝ նախադասությունը հասկանալով այսպես՝ «Իսկ ինչ որ անմարմին է, նաև պարզ էություն է...», ապա այդ դեպքում չի արդարացվի «հրեշտակ», «դև», «ոգի» բառերի սեռականով արտահայտվելը, և ուրիշ փոփոխության պահանջ կառաջանա: Նման մոտեցմամբ այդ բառերը պետք է ուղղական հոլովով դնել: Սակայն այդ հնարավորությունը մենք հավանական չենք համարում և կանգ ենք առնում վերը արված առաջարկի վրա:

Ծ. Նվերիկը, խոսելով իր ժամանակներում ժողովրդի մեջ տարածված որոշ անոտիալաշտական պատկերացումների մասին, գրում է նաև հետևյալը. «Եւ եթէ ի դաշտս երազազանք ձգիցին, և հեծեալք իբրև դմարդիկ զհետ երէնյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց» (էջ 106—107):

Այստեղ գործածված «երազազանք ձգիցին» արտահայտությունը տարբեր ձևերով է հասկացվել, փոփոխության է ենթարկվել, վիճաբանության տեղիք տվել: Նրա թուրքմենոմը գալիս է դեռ Զմյուռնիայի տալազրությունից: Այնտեղ դա ներկայացված է «էրէ գազանք և ձգիցին» ձևով. «երազազանք» բառաձևը դիտվել է որպես երկու բառերի մեխանիկական միացություն (ըստ Վրչագրական սովորության՝ բառերի կից գրություն, Վ-ի փոփոխությամբ) և բաժանվել է երկու մասի՝ «էրէ գազանք», այսինքն՝ «երե գազաններ»: Այդպես են հասկացել և ուրիշները:

Ե. Դուրյանը «Եղծ աղանդոցի» գերմաներեն առաջին թարգմանական թարգմանության (Հ. Մ. Շմիդի) հրատարակվելու առթիվ գրած իր հոդվածում սխալ է համարում այն, որ վերոհիշյալ արտահայտությունը հասկացվել է «որսի գազաններ կսուրան» և այդ պատկերացմամբ էլ թարգմանվել²⁴: Իսկ Դ. Գալեմբյարյանը, հանդես գալով պատասխան հոդվածով (հիշենք, որ Շմիդը թարգմանությունը կատարել էր նրա կազմած քննական բնագրից), ընդհակառակն, գտնում է, որ «երազազանք»-ի դիմաց «երէ գազանք»-ն է ճիշտ. «ձգել» բայն էլ ունի «սուրալ» նշանակությունը, ուստի «որսի գազաններ կսուրան» մեկնաբանությունը ճիշտ է²⁵: Այս սլոգանն ընդունելի չէ:

Իրավացի են այն բանասերները, որոնք «երազազանք»-ի փոփոխման հարց չեն դնում և բառը բացատրում են իր իսկ իմաստով: Վենետիկյան հրատարակությունը (և սրան հետևածները) ու ձեռագիրը այստեղ նույնական են, տարբերություն չունեն, և սղավաղում էլ չկա: «Երազազանք»-ը «երազազ»

²⁴ Տե՛ս «Մասիս», 1900, էջ 371:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 403:

բառի հոգնակին է՝ -ան + -ք մասնիկներով: Հավանաբար կասկած է առաջացել -ան մասնիկի պատճառով, որը բառի զագ մասի հետ միանալով նրան տալիս է զագան ձևը, իսկ մյուս՝ ետա մասն էլ հարմարեցվել է «երէ»-ին: Սակայն հայտնի է, որ -ան և -ք մասնիկների համադրական գործածությունը դասական հայերենում (ինչպես և հետագա շրջաններում) ընդունված երևույթ է: Նոր հայկազյան բառարանում²⁶ նշում կա այն մասին, որ «երագազ» բառը հոգ-նակի թվում գործածվում է նաև «երագազանք» ձևով: Այդ բառի գոյության մասին չի կարելի կասկածել: Դա գալիս է մեսրոպյան շրջանից: Այդ ժամանակների մեր ինքնուրույն գրականության մեջ, բացի Եղնիկից, այն գործածել է նաև Ագաթանգեղոսը²⁷: Ետմեսրոպյան շրջանից բառն արձանագրված է Ղ. Փարպեցու «Հայոց պատմության», ինչպես և Պիտոյից գրքի՝ մեջ և այլն: Ինչպես տեսնում ենք, բառը թեև լայն կիրառություն չի ունեցել, սակայն նրա վավերականությունն աներկբայելի է:

«Երագազ» բառի իմաստը (համապատասխան վկայություններով) Նոր հայկազյան բառարանը²⁸ ճիշտ կերպով բացատրել է՝ «ցանց կամ ուռկան թակարդիչ էրէոց և գազանաց»՝ միաժամանակ նշելով, որ գրվում է նաև «արագազ»: Եղնիկի հիշյալ արտահայտության մեջ բառը հենց այլ իմաստով է գործածված: Իսկ «ձգել» բայն էլ «լարվել» իմաստով է: Հատվածը կանոնավոր է և հասկացվում է այսպես. «Եվ եթե դաշտերում ցանցաթակարդներ լարվեն, ու որսի կենդանու ետևից մարդկանց նման հեծյալներ արշավեն, (գրանք) դեերի կեղծիքներ են և ոչ թե ճշմարիտ իրողություններ»:

6. Բնագրի «Յալլս արարածոցն ընդէր մաղթէ ղերկրպագութիւն հեթանոսութեան, և ոչ յինքն միայն կորզիցէ» նախադասությունը (էջ 108—109) տարակարծություններ է առաջացրել հատկապես այնտեղ գործածված «մաղթէ» բառաձևի իմաստի պատճառով: Ոմանք առաջարկել են «մաղթէ»-ն փոխարինել ուրիշ բառով, ինչպես՝ «սաղրէ» (Լ. Մարիես), «կռչէ», «հրաւիրէ», «յորգորէ» (Ե. Դուրյան)՝ կարծելով, որ դա հունարենից թարգմանելուց առաջացած թյուրիմացություն է, ուստի և կարող է շտկվել այդպիսի փոխարինումներով: Այդ փոխարինումները, սակայն, հարցը չեն պարզում:

Ե. Փեչիկյանը, «մաղթել» բառի համար նշելով մի շարք իմաստներ, ի վերջո կանգ է առնում «խնդրել» և «նվիրել» իմաստների վրա ու նախադասության համապատասխան մասն էլ հասկանում է այսպես. «Ինչո՞ւ ուրիշ արարածներու կնուիրէ հեթանոսութեան պաշտամունքը...»²⁹: Ինչպես տեսնում ենք, «նվիրել» իմաստի ընդունումով նա կարծես թե ղգալի շափով մոտենում է նախադասության մտքի ճիշտ ըմբռնմանը: Սակայն բանն այն է, որ «մաղթել» բառի համար այդպիսի իմաստ գրաբարի բառարաններում արձանագրված չէ, այլ մատնացույց են արվում «աղոթել», «խնդրել», «աղերսել», «բարեխոսել», «միջնորդել» և նման իմաստներ: Եվ որքան մեզ հայտնի է, աշխարհաբարում ու բարբառներում էլ այդ բառի համար «նվիրել» իմաստ չկա: Աշխարհաբարում և որոշ բարբառներում խնդրո առարկա բառը գործածվում է նաև մի այնպիսի իմաստով, որը միանգամայն պատշաճում է տվյալ գործածու-

²⁶ Տե՛ս հատ. 1, էջ 664:

²⁷ Տե՛ս նրա «Պատմութիւն Հայոցի» քննական հրատարակության 113-րդ էջը:

²⁸ Հատ. 1, էջ 664:

²⁹ Տե՛ս «Բաղմավեպ», 1929, էջ 69:

թյանը: Դա «մեկին մի բան կամենալ, մի լինել ցանկանալ» իմաստն է, որն, ի դեպ, արձանագրված է Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»³⁰: Բացառված չէ, որ մեր ժամանակակից լեզվում կենդանի պահպանվող այդ իմաստը եկած լինի հնագույն ժամանակներից: «Մեկին մի բան կամենալ» իմաստով «մաղթել» բառի բացատրությունը այլևս ոչ մի կասկած չի թողնում նախադասության մտքի վերաբերյալ: Իսկ նրա միտքն այս է. «Հեթանոսական երկրպագությունը նա ինչո՞ւ է կամենում ուրիշ արարածների և չի կորզում միայն իր համար»: Դա ավելի պարզ ու հասկանալի է դառնում: ամբողջ պարբերության մեջ, իսկ վերջինիս բովանդակությունը հետևյալն է. Լթե սատանան չարիքներ հրահրողն է, ապա ինչո՞ւ այնպես չի անում, որ միայն իրեն երկրպագեն և ոչ թե ուրիշ առարկաների, այսինքն՝ հեթանոսական երկրպագությունն ինչո՞ւ է ուրիշ արարածների կամենում և չի կորզում միայն իր համար:

7. Հեթանոսական պաշտամունքների պատճառին վերաբերող նշված հարցին պատասխանելով՝ Եզնիկը շարունակում է. «...յօժարեցոյց (սատանայ) զկէսսն՝ լուսաւորաց երկիր պագանել, և զայլս՝ օդոյ և հրոյ, երկրի և ջրոյ և հասակաց և փայտից և քարանց, մինչև օծից և գազանաց և ճճեաց անգամ...» (էջ 109): Այստեղ էլ տարբեր կերպ է հասկացվել «հասակաց» բառաձևը:

Զմյուռնիայի հրատարակության մեջ դա «հասկից» ձևով է, որով հրատարակիչները կարծել են, թե խոսքը հասկերի մասին է: Վենետիկյան հրատարակությունը պահպանել է «հասակաց»-ը, որը նույնական է ձեռագրի հետ:

2. Մ. Շմիդը «հասակ» բառը հասկացել է «մարդկային կերպարանք» (Menschengestalt)³¹: Լ. Մարիեսն իր հրատարակած բնագրում բառը փոխել է՝ դարձնելով «հասարակաց»³² և թարգմանել է «բոլոր առարկաները, ամբողջ իրերը» (choses communes)³³: Նա մոտեցել է ճիշտ բացատրությանը: Այստեղ «առարկա» իմաստի համար չենք առարկում, սակայն նշում ենք, որ իզուր է փոփոխված «հասակաց» բառաձևը:

Գ. Խաչատրյանը շատ հեռուն է գնացել թարգմանության մեջ՝ դա բացատրելով «եղանակ» բառով³⁴: Նա օգտվել է «Նոր հայկազյան բառարանի» մի բացատրությունից, որն այստեղ չի պատշաճում:

Պետք է ընդունել, որ բնագրում «հասակաց» բառաձևը ճիշտ է գործածված: Այստեղ «հասակ» բառն ունի «կանգուն առարկա» իմաստը: Դրա համար հիմք կարող է ծառայել «Նոր հայկազյան բառարանի»³⁵ մի նշումը, որը, սակայն, արված է ոչ թե բառահոգվածի բացատրությունների մեջ, այլ՝ վկայություններից հետո, բառահոգվածի վերջում: Այդ իմաստը մատնանշված է «Գիրք ծննդոցի» համապատասխան գործածության հաշվառումով՝ որպես հոմանիշ հուն. ἀναστῆναι և լատ. erectio բառերի: Այս նշանակությունն ամենից հավանական է Եզնիկի այդ գործածության համար, մանավանդ որ «հասակաց»-ը դրված է «փայտից», «քարանց» բառաձևերի մոտ, իսկ

30 Տե՛ս հատ. III, համապատասխան բառահոգվածը:

31 „Des Wardapet Eznik von Kolb Wider die Sekten“, Wien, 1900, էջ 86:

32 Փարիզյան վերջին հրատարակություն, էջ 32:

33 Տե՛ս նույնի ֆրանս. թարգմանությունը, էջ 58:

34 Բուենոս-Այրեսի հրատարակություն, էջ 53:

35 Տե՛ս հատ. II, էջ 50:

օձերի և ճիճուների մասին նշվում է հետո՝ առանձնացումով: Միայն թարգմանելիս պետք է անտեսել նրանից հետո եկող «և»-ը՝ նրա տեղ զննելով բռնի նշան՝ «կանգուն առարկաներին՝ փայտերին, քարերին...»: Կարևոր է նկատի ունենալ նաև, որ Եղնիկը «հասակ» բառը իր երկում մի այլ տեղ էլ գործածել է «առարկա» իմաստով: Հմմտ. «...ի չգոյ է ի գոյ ածել զհասակս ամենայնի» (էջ 239):

8. Այս դեպքում խոսքը վերաբերում է Եղնիկի «զեմեղիցէ» բառաձևին (էջ 125): Սրա վրա նախ կասկածել է Նորայր Բյուզանդացին և առաջարկել է ուղղել «զեմեղիցէ», իսկ «զեմեղել» բառն այստեղ հասկացել է «հաստատուն, ամբողջ, անվտանգ պահել»: Ըստ այդմ՝ Եղնիկի «Եթէ առ տկարութեան չզեմեղիցէ...» նախադասությունը թարգմանել է այսպես. «Թէ և տկարութեան պատճառաւ չի կրնար հաստատուն, ամբողջ, անվտանգ պահել...»³⁶:

Հետագայում սրան անդրադարձել են և ուրիշ բանասերներ, ինչպես՝ Բ. Կյուլենսերյանը³⁷, Ե. Փելիկյանը³⁸ և այլն: Ե. Դուրյանը նշել է, որ այդ դեպքում «զեմեղել»-ը իմաստ չունի, ուստի «զեմեղել»-ը մնում է անփոփոխ³⁹, նա, իհարկե, չի սխալվել:

«Զեմեղել» բառի համար ուշադրության արժանի է «Առձեռն բառարանի» բացատրությունը՝ «մեղբնալ, գութ շարժիլ, վտանգէ ազատել»⁴⁰: Ընդգծված իմաստի առկայությամբ իսկապես որ Եղնիկի հիշյալ գործածություններ փոփոխման ենթակա չէ: Այդ իմաստի հաշվառումով նախադասությունն էլ պարզ հասկացվում է. «Եթե անկարողության պատճառով վտանգից ազատ չի պահում...»:

9. Բնագրի «Քանզի բարին և չար ի միում անկանել ոչ մարթէին» նախադասության մեջ (էջ 132) Զմյուռնիայի հրատարակությունը «ի միում»-ից հետո ունի «տեղի»: Զեռագրի լուսանցքում հետագայում տարբեր գրությամբ է ավելացված «տեղի» բառը: Ե. Դուրյանը, ընդունելով «ի միում տեղի» արտահայտությունը, միաժամանակ նպատակահարմար է համարել «անկանել»-ը կարդալ «ազանել»՝ «ի միում տեղի ազանել»⁴¹: Դ. Խաչատրյանը ներառել է «տեղի» բառը, սակայն «անկանել»-ին ձևը չի տվել⁴²:

Մեղ թվում է, որ հավելման կամ փոփոխման կարիք չկա: «Ի միում անկանել» պետք է հասկանալ «համատեղվել»:

10. Բնագրի «գառէին» (էջ 134) ձևի համար առաջարկվել է «գայռէին» ուղղումը⁴³:

Ծիշտ է, «Նոր հայկազյան բառարանը» հղումով առաջնությունը տալիս է այս բառի «գայռել» տարբերակին, սակայն պետք է հաշվի առնել, որ «գառել» տարբերակն էլ նույն ձևով գործածություն է ունեցել մեսրոպյան շրջանի հայերենում: Ուստի փոփոխման հարկ չկա: Երկու տարբերակների համար էլ չմաստը մնում է նույնը՝ «պառկել»: Իսկ Զմյուռնիայի տպագրությունը դրա

³⁶ «Հայկական բառարանություն», էջ 16:

³⁷ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1907, էջ 314:

³⁸ Տե՛ս «Բաղմավես», 1929, էջ 71:

³⁹ «Ամբողջ երկեր», 2, էջ 412:

⁴⁰ Տե՛ս էջ 293:

⁴¹ «Ամբողջ երկեր», 2, էջ 413:

⁴² Տե՛ս Բաբենոս-Այրեսի հրատարակությունը, էջ 65:

⁴³ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1907, էջ 314:

փոխարեն ունի «առնէին», որը ճիշտ չէ և չի համապատասխանում արտահայտվող մտքին:

11. Երկրորդ գրքի ԺԶ գլխում գրված է՝ «Եւ ոչ, յորժամ զազնուականի ուրուք գորգի յաղակատանս հասեալ տեսանիցէ որ, և ասիցէ՝ թէ կորուսանելոց է զինչսն հայրենիս, նա ինչ իցէ պատճառք վատնելոյ ընչիցն» (էջ 164):

Նորայր Բյուզանդացին առաջարկել է «յաղակատանս հասեալ» արտահայտության «հասեալ»-ը ուղղել «հատեալ»⁴⁴: Դա ընդունելի են համարել նաև ուրիշ բանասերներ (Ե. Փեչիկյան, Ե. Դուրյան և այլն): Սակայն այդպիսի փոփոխության համար անհրաժեշտություն չկա: Արտահայտության իմաստը որոշակի է ու հասկանալի: Եվ ահա թե ինչպես: Այստեղ «աղակատանք» բառը, որ նշանակում է «զեղխություն, շռայլություն, ցոփություն», հայցական հոլովով («աղակատանս») և «յ» («ի») նախդիրով («յաղակատանս») գրված է որպես «հասանել» բայի խնդիր: Այսպիսով՝ «յաղակատանս հասանել» նշանակում է «ցոփության (զեղխության, շռայլության) հասնել»: «Հասանել» բայի այսպիսի խնդրառությունը շատ սովորական է մեր հին լեզվի համար: Եվ, ընդհանրապես, մի բանի հասնելը նշանակող արտահայտությունը խորթ չէ հայերենին, թեև այս դեպքում այն բացասական իմաստ ունի:

Այդպիսի պատկերացմամբ հատվածը հասկացվում է այսպես. «Երբ մեկը տեսնի մի ազնվականի որդու ցոփության հասած և ասի, թե կորցնելու է հայրական ունեցվածքը, ինքը հո ունեցվածքի վատնման պատճառ չի լինի»:

12. Եղեկը, կանգ առնելով երազների վրա, նշում է, որ նախօրոք մտածմունքի առարկա չդարձած երևույթներին վերաբերող երազները երկու պատճառից են առաջանում: Եվ առանձին պարբերություններով խոսում է այդ պատճառների մասին: Առաջին պարբերությունն սկսում է «Կամ»-ով, երկրորդը՝ «Եւ մի իմն»-ով (էջ 178):

Ակնհայտ է, որ այսպիսով ընդհանուր շարադրանքի մեջ ոճական անհարթություն է առաջանում: Այդ պատճառով էլ կարծվել է, թե «Եւ մի իմն» արտահայտությունը աղավաղման արդյունք է: Այստեղից էլ սրբագրման պահանջ է առաջացել:

Հ. Աճառյանը, անդրադառնալով դրան, այն միտքն է հայտնում, թե բնագրի ընդօրինակումների ժամանակ երկաթագրի մեջ շատ հեշտությամբ կարող էին շփոթվել ՄԻԻՄՆ և ՄԻԻՍՆ ձևերը (իհարկե, խոսքը մեզ հասած ձեռագրին չի վերաբերում, որը երկաթագրով չի գրված): Այդ հիմունքով էլ նա նպատակահարմար է համարում ուղղել «միւսն» ձևով⁴⁵: Լ. Մարիեսը, դա հաշվի առնելով, բնագրի հրատարակության մեջ «մի իմն»-ը դարձրել է «միւսն»⁴⁶: Եվ այդպես էլ թարգմանել է՝ «l'autre»⁴⁷: Ի միջի այլոց, ծանոթագրությունների բաժնում բերված է նույն հիմնավորումը, սակայն չի հիշատակված որպես Հ. Աճառյանի առաջարկ⁴⁸:

Այդպիսի փոփոխությունը դրությունը ոչնչով չի բարելավում, որովհետև «և մի իմն» նշանակում է «մեկն էլ»: Հեղինակը «կամ»-ով սկսել է, մի պատճառը բացատրել և ապա անցնելով երկրորդ պատճառին՝ փոխանակ ասելու

44 «Հայկական բառաքնություն», էջ 39:

45 «Քննություն և համեմատություն եզնկայ նորագիտ ձեռագրին», էջ 91—92:

46 Փարիզյան վերջին հրատարակություն, էջ 79:

47 Տե՛ս նրա ֆրանսերեն թարգմանությունը, էջ 91:

48 Տե՛ս նույն թարգմանության 596-րդ ծանոթությունը, էջ 203:

«և կամ», ասել է «և մի իմն», այսինքն՝ «մեկն էլ»։ Ըստ երևույթին, դա նույնությամբ գալիս է հեղինակային բնագրից։ Հիշյալ փոփոխությունը կարդարացվեր, եթե առաջին պատճառը բացատրող պարբերությունն սկսվեր «մին»-ով («մին» — «և միսն»)։

Ուրեմն այստեղ էլ բնագրին չպետք է ձեռք տալ, պետք է թողնել նույնությամբ, իսկ ոճի կանոնաւորման մասին պետք է մտածել թարգմանության մեջ, որպիսի մոտեցումը միշտ էլ թույլատրելի է։ Այդ զուգադիր արտահայտությունները թարգմանության մեջ կարելի է ներկայացնել այսպես՝ «առաջինը» — «երկրորդը», «մեկը» — «մյուսը», «կա՛մ» — «կա՛մ», «կա՛մ» — «կա՛մ էլ»։ Մենք նախընտրելի ենք համարում վերջին միջոցը, քանի որ, ինչպես վերը նշեցինք, բնագրում առաջին պարբերությունն սկսվում է «կամ»-ով, ուստի նրան կարելի է հարմարեցնել հաջորդը։

13. Բնագրի «...քանզի ոչ կար է ականբաց ի ցամաք գործել» նախադասության մեջ մութ է մնում «ականբաց ի ցամաք գործել» արտահայտությունը (էջ 190)։

Գրաբարի բառարանները չունեն «ականբաց» գլխաբառը։ Ըստ երևույթին, չեն համարել մեկ ամբողջական բառ։ «Նոր հայկադյան բառարանը»⁴⁹ այլ նախադասությունը բերում է «բաց» բառի տակ՝ համապատասխան մասը թեականորեն նշելով «ակն բաց (կամ ականբաց)» ձևով և իմաստն էլ դարձյալ թեականորեն բացատրում՝ «նշանակե՛ կա՛մ բաց ակն, կա՛մ ի բացագոյն ցամաք»։ Բառարաններում բերվում է «ականբացել» բայ՝ «անցք կամ առվակ բացել, խորշեր պատրաստել՝ պարտեզը կամ արտը ջրելու համար» նշանակությամբ, որը չի հարմարվում հիշյալ գործածությանը։

Ե. Դուրյանն ուշադրություն է դարձրել այս արտահայտության վրա։ Նա մի կողմից նշել է, որ թարգմանելիս կարելի է օգտագործել «ականբացել» բայի իմաստը, իսկ մյուս կողմից էլ ենթադրել է, թի «ականբաց»-ը կարող է լինել «ակն բաւ», որտեղ «բաւ» բառը իբրև գոյական կնշանակե «հասնելու ծայր»։ Այդպիսով առաջարկել է թարգմանել «...որովհետև չեն կրնար դեպի ցամաք հասնելու ծայր մը գտնել...»։ Բայց նա վերջում, այնուամենայնիվ, «ի ցամաք գործել»-ը հարցականի տակ է թողնում⁵⁰։ Գ. Խաչատրյանը հենվում է «ականբացել» բայի վերոհիշյալ իմաստի վրա՝ նախադասությունը թարգմանելով այսպես՝ «որովհետև առաջին բանալով չեն կրնար ցամաքեցնել զայն»⁵¹ (այսինքն՝ ծովը)։

Նախ՝ չենք կասկածում, որ «ականբաց»-ը մի ամբողջական բարդ բառ է։ Ապա ըստ բնագրային հանգամանքների՝ տրամաբանորեն մեզ թվում է, որ այդ բառը նշանակում է «տեսադաշտ», այսինքն՝ աչքի բացվածք, որն ընդգրկում է տեսնելիքը։ Այդ իմաստին էլ հաջորդում է «ի ցամաք գործել» արտահայտության «ցամաքին հասցնել» նշանակությունը։ Ուրեմն «ականբաց ի ցամաք գործել» պետք է հասկանալ «տեսադաշտը ցամաքին հասցնել», այսինքն՝ ցամաքը տեսադաշտի մեջ վերցնել, տեսնել։ Այս մոտեցմամբ նախադասությունը թարգմանվում է այսպես՝ «...որովհետև չեն կարող տեսադաշտը ցամաքին հասցնել», այսինքն՝ չեն կարող ցամաքը տեսնել։ Դա միանգամայն

⁴⁹ Տե՛ս հատ. 1, էջ 469։

⁵⁰ Տե՛ս «Ամբողջ երկեր», 2, էջ 415։

⁵¹ Տե՛ս Թունես-Այրեսի հրատարակությունը, էջ 93։

տրամաբանական է դառնում բնագրի բարդ նախադասության մեթոդությանն ո՛նեջ՝ «նույնպես էլ ծովի մոտ գտնվողները որովհետև չեն կարողանում տեսադաշտը ցամաքին հասցնել, կարծում են, թե (արևը) ծովից է ելնում...»։ Այսպիսի բացատրության հիմնավորման համար կարևոր է հիշել բնագրի՝ մի քանի տող վերև բերված այն միտքը, թե՝ «...վասնզի ցամաք ուրեք ի ծովէ անտի ոչ երևի, յայն սակս թուի՝ թէ ի ծովէ անտի ելանիցէ» (արեգակն)։ Այսինքն՝ «...Ծովից ցամաքը չերևալու պատճառով այնպես է թվում, թե (արեգակը) ծովից է ելնում»։ Քննարկված նախադասությամբ Եղնիկը փաստորեն այս նույն միտքն է արտահայտել՝ տարբեր ձևակերպումով։

14. Այս դիտողությունը վերաբերում է մեր բանասիրության մեջ կատարված բնագրական մի հայտնի ուղղման։ Եղնիկի երկի վեներիկյան սկզբնական հրատարակության մեջ ներկայացված «այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն և ի գոյանալ երկին ի շոյէ և ի զոյէ» նախադասությունը (էջ 6—7), որ նույնական է ձեռագրի հետ, ընդգծված մասում թերություն ունի։ Պա վեներիկյան հրատարակությունից նույն ձևով անցել է նաև ուրիշ տպագրությունների մեջ (Փարիզի, Պոլսի, Թբիլիսի...)։ Այդտեղ վերջին «և» շաղկապն ավելորդ է, իսկ «գոյ» բառի բացառական հոլովածը («ի գոյէ») բացահայտ սխալ է։ Ծիշտը «ի» նախդիրով և հայցականով ձևն է՝ «...եկին ի շոյէ ի գոյ»։ Այդպես է թեևադրում բնագրի բովանդակությունը («անգոյությունից գոյություն եկան»)։

Այս սխալը ժամանակին նկատել են առաջին հրատարակիչները և ուղղել են Զմյուռնիայի տպագրության մեջ, որը, սակայն, երկար ժամանակ անտեսվել է։ Հետագայում Գ. Նահապետյանն առաջարկել է ուղղում կատարել հիշյալ ձևով⁵², որն ընդունելի է համարել Ե. Փելիկյանը⁵³, սակայն չի ուղղել վեներիկյան վերջին (1926 թ.) վերահրատարակության մեջ։ Գ. Խաչատրյանը ուղղել է Բունեսո-Այրեսի տպագրության մեջ։ Լ. Մարիեսը ձեռագրի և վեներիկյան տպագրի սխալը պահպանել է փարիզյան վերջին հրատարակության մեջ։ Ե. Դուրյանը ևս կողմնակից չի եղել այդպիսի ուղղման՝ գրելով. «Արարչության գործը՝ որ ի շոյէ կսկզբնաւորի կշարունակուի նաև ի գոյէ։ Եթե ճիշդ է այս վարդապետությունը, հարկ չենք տեսներ սխալ համարիլ ի գոյէ բառը»⁵⁴։ Այսպիսի պատճառաբանությունը չի կարելի հիմնավոր համարել, քանի որ Եղնիկը խոսում է այն մասին, որ, իբր, է-ն սկզբնապես ամեն ինչ արարչագործել է ոչնչից, անգոյությունից է գոյության բերել արարածները։ Տվյալ դեպքում նա չի խոսում առարկայից առարկա ստեղծելու մասին։ Պարզ է, որ ուղղումն է ճիշտ։ Սա, իհարկե, խնդրի տրամաբանական լուծումն է։ Սակայն դրա համար կան նաև «նյութական» ապացույցներ, որոնք Եղնիկի հենց նույն երկում են։ Այդպիսի ուղղման մեջ հաստատապես համոզվելու համար շափազանց կարևոր է նկատի ունենալ այլ աղբյուր վերը հիշատակված նախադասությունը, որով, այլ ձևակերպմամբ և այլ բնույթով, բայց մեզ հետաքրքրող մասի նույնականությամբ առարկաների սկզբնական արարչագործմանը վերաբերող միտքն է արտահայտվում։ Այսպես՝ «...ի շոյէ ի գոյ ածել զհասակս ամենայնի» (էջ 239)։ Կամ մի՞թե դրա օգտին չեն խոսում այն հայտնի ձևա-

⁵² «Ուղղագրութիւնը ազգային մատենագրաց», էջ 282։

⁵³ Տե՛ս «Բաղմավեպ», 1928, էջ 300։

⁵⁴ «Ամբողջ երկեր», 2, էջ 406։

կերպումները, թե՛ «...ածն ի շոյէ ի գոյ զշոյսն, և եցոյց յոչնէ յինչ զչէսն...» (էջ 7): Այսքանից հետո արդեն ոչ մի կասկած չի մնում ուղղման ճշտությունն ընդունելու համար:

Առաջմ բավարարվենք այսքանով: Մեր այս մեկնաբանությունները, առաջարկներն ու դիտողությունները, որ մի մասով նոր են առաջ քաշվում, մի մասով էլ ճշտում, խորացնում կամ լրացուցիչ տվյալներով հիմնավորում են եղածները, հետապնդում են միմիայն նշանակի երկի բնագիրը ճիշտ հասկանալու և նրա էությունը իրատեսությամբ բացահայտելու նպատակ:

НЕКОТОРЫЕ ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ ТОЛКОВАНИЯ ПРОИЗВЕДЕНИЯ ЕЗНИКА КОХБАЦИ

Проф. А. А. АБРАМЯН

(Резюме)

Текст произведения «Опровержение сект» известного армянского философа и теолога V в. Езника Кохбаци дошел до нас единственной рукописью, списанной в 1280 г. Впервые этот текст был напечатан в 1762 г. в Смирне. В дальнейшем многократно переиздавался в Венеции, Париже, Константинополе, Тбилиси и Буэнос-Айресе.

При списывании, а также при издании текст в разных местах подвергался искажениям. Кроме того, в нем имеются выражения, не ясные с точки зрения содержания. Многие филологи—исследователи этого текста—предлагали свои реконструкции и толкования. В статье предлагаются некоторые новые толкования и реконструкции выражений, слов и словосочетаний текста книги. В отдельных случаях дополнительными аргументами подтверждаются и углубляются положения других исследователей.